1 Փոստըը ՀՈՒՐԵՒՇԱԲԹԻ և ՇԱԲԱՔ օրերը կը հրատարակուի :

2. Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար :

3. Մէկ եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :

4. Տեղական և գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

5. Հատը մէկ դրշ. մէճիտ, եւ կը գտնուի մասնաւորապէս Պահչէ գաբու. Սուճի Պօղոս աղայի խանութը :



6. Ծանուցման տողը 3 դրշ. է մէկ անգամի համար : Աւելի ածան կընկայ աւելի անգամներու համար :

7. Խմբագրութեան վերաբերեալ ձրևէ գիր ուղղելի առ. Տճօրեն - Տէր Հ. Ս. Ալամաճեան կ. Պոլիս Պալըք բազար Նաճիյէ խան վերի յարկ Թիւ 16

ADRESSE

H. S. Zladjadjian

Directeur du Journal Armenien POUNTCHE
16 Nafié Han. Balouk Bazar Constantinople.

Թիւ 1589 ՀՈՒՐԵՒՇԱԲԹԻ 1881 ՅՈՒԼԻՍ 8

ԱԶԳԱՅԻՆ

Բուլղարիոյ Հայք

*Բաղում անգամ Ազգ. Պատրիարքութեան ուշադրութիւնը իրենդրուած է Բուլղարիոյ մէջ բնակեալ Հայոց ազգային կեանքը տրտում վիճակին վրայ, սակայն դժբաղդաբար կարեւոր պատճառներ մինչեւ մ՛եղած չէ դեռ : երբեմն այցելու ղրկելով չէ կարելի բարւոքել տոյա ներքին վիճակը, և ազգային լեզուն մշակել, ու ազգասիրութեան ոգի հաստատել : Մշտնջենաւոր իմամք ու հոգածութիւն անհրաժեշտ են : Բուլղարիոյ Հայք եթէ չեն կարող տանիլ նար - Պէյլեան Սրբազանի առաջնորդութեան համար պէտք եղած մեծ ծախսը բեռն, անշուշտ կրնան անդորրութեամբ հոգալ պարզապէս և սակաւապէս նկեզեցականին մը պէտքերըն : Արդէն այսպիսի մէկը կայ ի Փօքշան. գեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետ Իւթիւճեան, որ յիշեալ քաղաքի ազգայնոց հովուութեան ու վարժարանի հոգաբարձութեան պաշտօնները կը վարէ բաւական ժամանակէ հետէ, և ժողովրդական գոհունակութիւն կըսուի յաճախ իւր պաշտօնավարութեան բարւոք ընթացից համար. սա է որ Պատրիարքարանէն ալ գոհունակութեան գիր ընկալաւ : Փօքշանի Հայ վարժարանաց սակերաց և աշակերտուհիք այժմ Ջանիւք և յորդորանօք գեր. Իւթիւճեանի սկսած են ազգային լեզուաւ խօսիլ, միմեանց հայերէն գրել և գործածողներն մեղաւորել. այս վարժարանաց մէջ այժմ մինչեւ Բուլղն աղայք ուսում կառնուն և մեր լեզուն կուսանին : Տե՛ս թէ, բարւոք և անձանձիր ջանք ու խնամք ո՛րչափ արդիւնաւոր կլինին, ո՛րչափ կերպարանափոխ ըրած են : փա՛ռք Իւթիւճեանի : Դարձեալ կիմանանք Պատրիարքարանէն, որ Բուլղարիոյ Հայոց ազգային վիճակն ի նկատի առնու. ի Բուլղարիա ինչպէս Փօքշանի նոյնպէս և այլ քաղաքաց մէջ ազգային այսպիսի գեղեցիկ ու սիրուն շարժուձեւեր կակսին, եթէ Իւթիւճեանի պէս ժողովրդական և պարզասէր եկեղեցականի մը ինամոց ենթարկուին : Անգամ մ՛ալ դրե՛նք. — Բուլղարիոյ մէջ բնակեալ Հայք զո՛ւրկ են հայ լեզուէ, հայ սըրտէ ու ոգիէ. իրենց հայ անուանքն իսկ փոխուած են, և իգական սեռն ալ առ հասարակ ցրտացած են ազգային լեզուէ, ազգային զգացմանէ և ազգային եկեղեցիէ : Խղճա՛ պիտի կորնչի՞ զանոնք յետ սակաւ ժամանակաց, եթէ տակաւին անփոյթ ու անտարբեր գտնուի մեր ազգային կառավարութիւնն նոցա սիրտն ու ոգին Ազգին հետ կապելու համար :

Վազըվ ինչպէս չաբաթ օրն նոյնպէս և այսօր Թուրքիոյ եւրոպական ու ասիական կողմանց համար անհրաժեշտ եղած բարեկարգութեանց վրայ խորհրդածելու առթիւ քահ է. — « Հայկական ըսուած խնդիրն ալ, « որ ըստ հիմանց ի չդոյէ երե. « ւան հանուած է, դանձային « և այլ կարեւոր բարեկարգու« թեանց համար ժամանակաւ « աշխատութիւն չըլլալուն պատ« ճառաւ՝ զայրանալու հակամէտ « վերջի մը վիճակի մէջ մնացած « է : Ա՛յդ վերջն անհետ ընելու, « կամ՝ ինչպէս ճիշդն է ըսել՝ « այդ խնդրոյն չգոյութիւնը « հաստատելու համար, պէտք « է ձեռնհաս անձինք դնել գա« ւառական բոլոր պաշտօնեաներուն « վրայ, և բարենորոգմանց ու « չհնութեանց ձեռնարկել ան« յապաղ Օգուտ քաղենք եւրո« պիոյ ներկայ վիճակէն, որպէս « զի մեր թշնամիք չկրնան օգ« տիլ մեր անհոգութենէն : Օ« գուստ Սոլթանն Աբդիւլ ու « պետութեան զարգացման կը « քաջալայ, և դիւղեր ու ցերեկ « կզբաղի. հետեւաբար համայն « պաշտօնակալք ալ պարտին աշ« խատիլ բարենորոգմանց ու չի« նութեան համար ըստ բաղ« ձանաց Նորին վեհափառու« թեան : »

— Նախորդ թերթով գրած էինք, թէ Բ. Դրնէն ապդարարեալ է Պատրիարքարանի՝ վանէն և Պօլիս կոչել Տ. Խրիմեան Սրբազանն և Տ. Գարեգին վարդապետ Սրուանձտեանց : Մեր պաշտօնակցաց ոմանք այս լուրը հերքատարակելէն օր մը յետոյ իբրև անհիմն հերքեցին : Զարմացանք, որովհետև ատոյգ է, և նոյն ինքն Ս. Պատրիարքն անցեալ հինգշաբթի ազգային ժողովոյ կոչմանէ իրեն դացող բազմանդամ պատգամաւորութեան ալ յանուանէ յաւելով :

— Ատոնցմէն նորեկ ճամբորդէ մ՛իմացուած է, որ Կիլիկիոյ կաթողիկոսն վերջին օրերս չորեքշաբթական մը ղրկելով Կիլիկիոյ վիճակին ամեն կողմերն, յայտարարեր է թէ՝ Ս. Էջմիածին և Պօլսոյ կեդրոնական վարչութիւնը միացած են Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռն բառնալու համար, թէ ժողովրդեան կըմիայ փութալ այս չարեաց առաջքն առնուլ իրեն հետ համախորհուրդ, և թէ ինքն ալ քանի մ՛օրէն պիտի դառնայ : Ուղևորն կպատմէ թէ այդ չարագրգիռ չէշարերականն Ատանայի մէջ բընաւ ազդեցութիւն ունեցած չէ, սակայն կարելի է ուրիշ կողմեր դրգռութեան պատճառ լինի : Պատրիարքարանի ուշադրութեան կ՛յանձնեմք, որպէս զի ժամ յառաջ անօրինէ զարժանն. և մեք կփութամք ծանուցանել Կիլիկիոյ վիճակի սիրելի ազգայնոց, թէ կաթողիկոսէն իրենց դրուածն բոլորովին անհիմն է, և թէ՝ ո՛չ Ս. Էջմիածին և ո՛չ Պօլսոյ կեդրոնական վարչութիւնն այդպիսի դիտաւորութիւն մը չունին, և թէ՝ ինքն Կիլիկիոյ կաթողիկոսն բոլորովին պիտի քակէ կաթողիկոսական աթոռն, եթէ սոյն տարապայման կամակորութիւնը չարունակելով՝ անհրաժեշտ եղած կարգադրութեանց համար զինքն չ՛ստիպէ :

— Մինչդեռ կարնոյ ազգայնոց յուղեալ վիճակին վրայ կցաւէինք, և առ ի խաղաղութիւն և առ ի միաբանութիւն յորդոր կկարդայինք, վանէն սկսան տրտխուր ու ցաւալի տեղեկութիւնք գալ : Մեր ընդունած նամակներն գաւառապէս կգանգատին Սրբ. Աստուածածնայ Տ. Գարեգին վարդապետի դէմ, ազգային չահուց ջնասակար ցուցնելով : Զարմանալի է արդարև. եթէ գրուածները ստոյգ են՝ կհետևի ուրեմն թէ Տ. Գարեգին Սրուանձտեանց չէ կրցեր դոհ ընել ո՛չ ժողովուրդն և ո՛չ տեղական կառավարութիւնը : Աւտիկ առեղծուած մի դոր անայառ քննութիւն մը կրնայ լուծել :

— Ատանայէն կը գրեն յունիս 19 Թուով :

« Յաւելով կծանուցանեմ, թէ տեղւոյս ազգայինք տակաւին կը մնան իրենց անտարբերութեան մէջ ազգային գործոց նկատմամբ : Բարեմթեան ժամի օրը կատարեալ թոյլ պաշտօնակալք և օտարազգի ջրիատրնեակք չնորհատուութեան եկան մեր առաջնորդական Գեր. տեղապահ Հօր : Վաեմ. կառավարն փոքր ինչ տկար լինելուն պատճառաւ իր այցելութիւն և Մէնթուպճի էֆէնտին ղրկած էր. այսպէս թոյլ օտարազգի այցելուաց թիւն 100ի հասաւ. իսկ մեր ազգային ժողովականներէն ու խորհուրդներէն հազիւ 5—6 հոգի միայն եկան. ժամի պատճառաւ եղած ամեն ծախք նոյն ինքն Գեր. Տեղապահն վճարել հարկադրեցաւ. անցեալ օգոստոսին, 200 ղրուշ ամսական օրոշեցին առաջնորդարանի ծախուց համար, և միայն երկու ամիս, և այն՝ մասն առ մասն վճարելէն յետոյ դադրեցուցին : Քաղաքիս մէջ կա՛ն բաւական թուով հարուստ ու ձեռնհաս ազգայինք, սակայն չեն ճանչնար իրենց ազգային պարտականութիւններն : Ազգային ամեն գործ գրեթէ Գեր. Տեղապահին վրայ ծանրացած են. ստիպեալ է յաճախ կառավարութեան դուռն երթալ. չըսկայ վիճակներէն ե-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ

(Տե՛ս թիւ 1388)

1870 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵՂԵՔԻԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ (*) ԻՐ ԿՈՂՄԱՆ ԴԻՄԱՑ ՀԱՅՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ

Ա.

Ներածութիւն

Ամենայն ազգ, որ ունի պատմութիւն, ունի եւ մատենագրութիւն, որ է հայելի նորա կենաց, գործոց եւ վարուց։ Ազգ մի, որ ունի պատմութիւն, բայց չունի մատենագրութիւն, նման է մարդոյ, որ ունի աչս, բայց չունի հայելի։ Ազգ մի, որ ունի մատենագրութիւն, բայց չունի պատմութիւն, նման է մարդոյ, որ ունի հայելի, բայց չունի աչս։ Ազգ մի, որ չունի ոչ պատմութիւն եւ ոչ մատենագրութիւն, նման է մարդոյ, որ չունի ոչ աչս եւ ոչ հայելի։ Ազգ մի, որ ունի պատմութիւն եւ մատենագրութիւն, նման է մարդոյ, որ ունի աչս եւ հայելի։ Ազգ մի, որ ունի պատմութիւն, բայց ոչ մատենագրութիւն, նման է մարդոյ, որ ունի աչս, բայց ոչ հայելի։ Ազգ մի, որ ունի մատենագրութիւն, բայց ոչ պատմութիւն, նման է մարդոյ, որ ունի հայելի, բայց ոչ աչս։

Ես ոչ ունիմ ազգիս պատմութիւն, ոչ մատենագրութիւն, ոչ հայելի, ոչ աչս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ եմ, ո՞ր տոհմէ եմ, ո՞ր ցեղէ եմ, ո՞ր ծագումէ եմ, ո՞ր արմատէ եմ, ո՞ր ծառէ եմ, ո՞ր ճիւղէ եմ, ո՞ր տերեւէ եմ։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին հայրս եւ մայրս, պապս եւ պապիկս, մեծ հայրս եւ մեծ մայրս, նախահայրս եւ նախամայրս, նախնիքս եւ նախնեացս նախնիքը։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ազգակիցներս, ազգատոհմիկներս, ազգայինքս, ազգականներս, ազգատոհմականներս, ազգայնականներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին բարեկամներս, ընկերներս, ծանօթներս, դրացիներս, հարեւաններս, ծանօթակիցներս, ընկերակիցներս, բարեկամակիցներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ուսուցիչներս, վարդապետներս, քահանայապետներս, եպիսկոպոսապետներս, կաթողիկոսապետներս, պատրիարքապետներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ուսանողներս, աշակերտներս, ընկերուհիներս, բարեկամուհիներս, ծանօթուհիներս, դրացուհիներս, հարեւանուհիներս, ծանօթակցուհիներս, ընկերակցուհիներս, բարեկամակցուհիներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ուսուցչուհիներս, վարդապետուհիներս, քահանայապետուհիներս, եպիսկոպոսապետուհիներս, կաթողիկոսապետուհիներս, պատրիարքապետուհիներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ազգակցուհիներս, ազգատոհմիկուհիներս, ազգայնուհիներս, ազգականուհիներս, ազգատոհմականուհիներս, ազգայնականուհիներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին հարսներս, աներս, աներոջս հարսներս, աներոջս աներս, հարսիս հարսներս, հարսիս աներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին կանայքս, կանանց կանայքս, կանանց կանանց կանայքս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին զաւակներս, զաւակներուս զաւակներս, զաւակներուս զաւակներուս զաւակներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին աղջիկներս, աղջիկներուս աղջիկներս, աղջիկներուս աղջիկներուս աղջիկներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին թոռներս, թոռներուս թոռներս, թոռներուս թոռներուս թոռներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին թոռնուհիներս, թոռնուհիներուս թոռնուհիներս, թոռնուհիներուս թոռնուհիներուս թոռնուհիներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ծոռներս, ծոռներուս ծոռներս, ծոռներուս ծոռներուս ծոռներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ծոռնուհիներս, ծոռնուհիներուս ծոռնուհիներս, ծոռնուհիներուս ծոռնուհիներուս ծոռնուհիներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ծոռնիկներս, ծոռնիկներուս ծոռնիկներս, ծոռնիկներուս ծոռնիկներուս ծոռնիկներս։ Ես ոչ գիտեմ, թէ ո՞ր ազգէ էին ծոռնուհիկներս, ծոռնուհիկներուս ծոռնուհիկներս, ծոռնուհիկներուս ծոռնուհիկներուս ծոռնուհիկներս։

«Քաղաքական ժողովը իրաց այս յաւալի վիճակին վերջ տալու համար քանի մը անօրէնութիւններ ըրած է, որք են։»

«1. Նիկոդայոս Եպիսկոպոսը Սիսէն հեռացնելու համար Բ. Դրան ներէեր գրուած և արգէն Բ. Դուռը ընդունելով կայսերական հաւանութեան յանձնած է(*)։»

«2. Տիգրանակերտի Առաջնորդ Յակոբ Եպիսկոպոսն՝ Սոյ կաթուղիկոսական Տեղապահ ընտրուած է(**) մինչեւ ցընտրութիւն նոր կաթուղիկոսի։»

«3. Նիկոդայոս Եպիսկոպոսի հեռանալէն ետեւ, անմիջապէս Եպիսկոպոս մը պիտի դրկուի Սոյ թեմերը, երեք նշանակուած ընծայել պրպտել պալ այն տեղի ներկայական և ժողովրդոյ ձեռնհասութեան և ժողովրդոյ ձեռնհասութեան վրայ. որպէս զի Ազգային Ընդհանուր Ժողովը ալ նոյն երեք ընծայեալոց վրէն մէկն ընտրէ կաթուղիկոս Սոյ։»

«4. Նիկողայոսի ձեռնադրած ապօրինաւոր Եպիսկոպոսներէն մէկը՝ Դաւիթ ներշապուհ անուն վարդապետը՝ Սոյ վիճակները խռովութեան մէջ ձգած ըլլալուն համար Բ. Դրան ներէեր գրուած է զանի կիպրոսի վանքը վոխադրել տալու, և արգէն հեռագրական հրամանագիրը դրկուած է Յաւտանա։» (Բացատ. Ազգ. Ժողով.

(*) Ըստ այմ Տ. Նիկողայոս Եպիսկոպոս Բ. Դուռն հրամանաւ երկրորդ անգամ ընդ հակազդեցութեամբ կը ժամանէ ի Կոստանդնուպոլիս ի 14 օգոստոսի 1871, և կիմանան Սուլթան Մէհմէտի հիւանդութիւնը, ուրկէ զարձեալ ընդ հակազդեցութեամբ կը փոխադրուի ի Վանս Աբրաշու ի 29 Սեպտեմբերի 1871։ Կայսերական վերջին վաւերաթեան պատճառաւ ազատութիւն զանելով կուգայ ի Կ. Պոլիս 1876ին և գրաւոր կերպիւ կաթուղիկոսական անունէն եւս հրաժարելով հրամանաւ Պատրիարքարանի իրեւ սոսկ Եպիսկոպոս կերթայ Յաւտանա, ուր և կը վախճանի 1880 Յունուարին։

(**) Տ. Յակոբ Եպիսկոպոս չէ ընդունած այս պաշտօնը, որոյ տեղ ի վերջոյ Երուսաղէմի միաբան Տ. Սիմէոն Եպիսկոպոս Ակֆէրեան զրկուած է։ (Տես հանգամանութիւն Ազգ. Ժողով. 1870 — 1871 ամի երես 19)։

(3) Քաղաքական ժողովը թէպէտ և եւր այս տեղեկագրով նախապէս յայտարարած է թէ՝ Տ. Նիկողայոս Եպիսկոպոսի ի Սիս վերադարձը առանց Պատրիարքական Լատն ժողովին հրամանին տեղի ունեցած է, սակայն ի վերջոյ ոմանց երեսփոխանաց հարցումին նախապէս պատասխանուած է երկիցս խոստովանիլ թէ արդարև Տ. Նիկողայոս Եպիսկոպոս Պատրիարքարանէ ընդունելութեամբ՝ ըսել է ֆիրմանեամբ ու հրամանաւք, վերադարձած է ի Սիս։ (Տես նոյն բացատ. նիստ Բ. երես 29։ Նիստ Գ. երես 35 և նիստ Ե. երես 70)։

1870 ամին նիստ Բ. երես 27)։

Քաղաքական ժողովը այս տեղեկագիրը ընդ և ճարպ ներկայացուցած է Ազգային Ժողովոյն։

Թէպէ,

Վասն զի Սոյ Ինդիրը միայն կը պարունակէ, մինչդեռ Ազգային Ժողովոյ 1865 Դեկտեմբեր 24ի նիստէն սկսեալ Ազգամարայ և Սոյ Ինդիրներն ակզբամբ իրրեւ մի և նոյն Ինդիր ուշադրութեան առնուած՝ և վճիռներ ու որոշումներ ընդունած են, և իրենց նոյն Ինդրոց կանոնական զանազան ծրագիրներ պատրաստուած, յորոց մին — կաթուղիկոսական ցանձնաժողովոյ ծրագիրն — ալ ընդունուած է իրեւ ընտրական օրինք (տես երես 518), որոց նկատմամբ հարկ էր տեղեկութիւններ հաղորդել վերակազմեալ Ազգային Ժողովոյն, ինչպէս նաև բացատրութիւն տալ թէ ինչո՞ւ Ազգամարայ Ինդիրն Սոյ Ինդրէն զատած է, որպէս զի Ինդիրն ուրոշ կերպով վիճաբանութեան ենթարկուելու, և որպէս զի երեսփոխանաց վիճաբանութեան մէջ ձգած ըլլալուն համար Ներէեր գրուած է զանի կիպրոսի վանքը վոխադրել տալու, և արգէն հեռագրական հրամանագիրը դրկուած է Յաւտանա։ (Բացատ. Ազգ. Ժողով.

Վասն զի լռութիւն կը պահէ այն պարագայի համար, որք եկեղեցական վիճակային Ժողովոյ վճռոց, (տես երես 569-571), և կաթուղիկոսական ցանձնաժողովոյն պատրաստած ընտրական օրինաց (տես երես 535 - 538) գործադրութեան արգելք եղած են, որոց բացատրութիւնն անհրաժեշտ հարկ էր նորընծաի երեսփոխանաց համար։

Վասն զի նոյնպէս լռութիւն կը պահէ ի 6 փետրվարի 1867 կազմեալ եկեղեցական Մասնաժողովոյն ի դէր առած կանոնագրութեան նկատմամբ (տես երես 640 - 649) մինչդեռ հարկ էր տեղեկութիւն տալ, որպէս զի Ազգային Ժողովը գիտնար թէ ամենայն Հայոց Հայրապետն ինչ պայմաններով կընդունի որ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսունք Ազգամարայ և Սոյ կաթուղիկոսութեանց համար ընծայեն ներկայանան և Ազգային ժողովն ալ նոյն կաթուղիկոսական ընտրութեանց մասնակցի. և,

Վասն զի նմանապէս չյիսուիր բնաւ 1868 Փետրվարի Պատրիարքական խառն ժողովոյն իրմէ բազրած կանոնագրութեան նկատմամբ (տես երես 695 - 710), մինչդեռ հարկ անհրաժեշտ էր այս մասին տեղեկութիւն տալ, որպէս զի յայտնուի թէ ամենայն Հայոց Հայրապետն ինչ չափ յատուկ կանոնակաւ (տես երես 711 - 735) քննագատած և մերժած է ընոյն կանոնագրութիւն։ Բայց այս լռութիւնն անշուշտ աննպատակ չէր, զի եթէ այս մասին տեղեկութիւն մը հաղորդէր՝ ակն յայտնի երեւան պիտի գար թէ՝ Քաղաքական ժողովը առանց նոյն կանոնագրութեան վերաբերմամբ բան մ'ընելու պատրաստուած է գործադրութեան դնել զայն, և Ազգային ժողովոյ հաւանութիւնն ըստանալու համար միայն իր այս տեղեկագիրը ներկայացուցած առ Ազգային ժողովը։ Տարակոյս չկայ թէ այս նպատակին համար է նաև որ Ազգամարայ Ինդիրը Սոյ Ինդրէն զատած է, և բոլոր նախորդ որոշմանց և ձեռնարկութեանց նկատմամբ լռութիւն պահած։

Ճշդել,

Վասն զի եթէ իրրեւ որոշեալ Ինդիր կը ներկայանայ՝ յայտնի չէ ամենեւին թէ իրրեւ վարչութեան ձեռնհասութենէն վե՞ր Ինդիր ներկայացած է Ազգային ժողովոյն թէ իրրեւ ուղղակի Ազգային ժողովոյ ձեռնհասութեան պատկանեալ Ինդիր՝ անոր որոշմանը յանձնելու է. և

Վասն զի այս տեղեկագիրն որչ ասուածէն մը հեռուապէս և վիճաբանութեան որոշ հիմ մը չպարունակեր, այլ ի՛նչ որ ծրագրութենան դրուած է, զայն կը ծանուցանէ, և ի՛նչ որ պիտի ծրագրուի 3ր յօդուածով անոր ձեռնարկելու եղանակը կիմացնէ, մինչդեռ բուն Ինդիրն այս էր թէ՝ ի՞նչ են Ազգամարայ և Սոյ կաթուղիկոսութիւնները, և ո՞վ պիտի ընտրէ Ազգամարայ և Սոյ վանահայր վիճակաւորները, որք իրենց անցեալ վիճակովն ասոն այս պարագութեամբ պէտք էին ներկայացուիլ Ազգային ժողովոյն, որպէս զի Ազգային Երեսփոխանաց վիճաբանութիւնն որոշ հիմ մ'ունենար, և Ինդրոյն այլ և այլ մանրամասնութեանց վրայ չտարածուելով ընդ միայն իւր լուծումն առնուր Ինդիրն և վերջանար, միանակ այնչափ ըղբաղեցնելու Ազգային ժողովը։

(Մնացեալը յաջորդով)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻ

Բամազանի մերձենալուն պատճառաւ, պաշտօնատանց ոմանց ամսականը վճարեցան, և զինուորական պաշտօնատան մասիս ամսականն ալ պիտի վճարի։

— Եւրոպական խորհրդոյ անդամներէն Բիլա էֆէնտի Հալէպ պիտի երթայ առ իշխանութիւն։

— Հռչակաւոր Շէյխ Ապիտուլլահ այսօր մայրաքաղաքս կը հասնի,

—Ցաւ սիւ Պոսֆոր կգրէ, թէ գեսպանը քանի մը աղգարարութիւն ըրեր են՝ Գարատաղի արեւելեան սահմանաց խնդրոյն համար։

— Ըստ Սթամպուլի՝ օսմանեան արժէթղթատեարց պատուիրակը երբ Պոլիս գան, օսմանեան տէրութեան եւրոպացոյցն և ներկայ եւրոմուտն քննել պիտի ուզեն, և եթէ չընդունուի այս մասին վերաբերեալ իրենց յատակագիծն՝ պիտի հրաժարին ու մեկնին։ Աւստրիոյ և Իտալիոյ արժէթղթատեարց կողմանէ ալ պատուիրակք պիտի գան։ Ռուսիա ալ պաշտօնակալ մը պիտի կարգէ՝ պատերազմական հարկին վճարման համար պատուիրակաց ընելիք կարգադրութեան տեղեկանալու պաշտօնով։

— Պէնկազիի նաւահանգստի տեսուչ Ահմէտ պէյ գինուորական կարգէ հանուեր, և այլ քանի մ'անձինք բռնուեր բանտարկուեր են, բայց պատճառն դեռ յայտնի չէ։

— Գասթամունիի կուսակալ Ղալիպ փաշայի որդին Սաադեդ պէյ՝ որ Բ. Դրան օտար թղթակցութեան գլուխի անդամներէն է, երկուշաբթի գիշեր ժամը 2ին առներն էրէն գլուղի հովանոցին մէջ ինքզինքն սպաններ է։ Առջի իրիկուընէ պարտիզպանին «Նայէ՛, լեցո՞ւն է բէվոլվէրն, ինքզինքս պիտի սպաննեմ» ըսեր է պարտիզպանին, և նա՝ խրատելու եղեր է. սակայն մոիկ չէ ըլեր, և աւելցուցեր է թէ «Զքեզ ալ կսպաննեմ, եթէ արգելուս.» ասոր վրայ պարտիզպանն այգիէն մեկներ է՝ դրացւոյ հաղորդելու համար. այս պահուն՝ Սաադեդ պէյ բէվոլվէրն քաշեր, և ծնօտէն ու ցարծքէն զարնուելով՝ գետինը փռուեր է. դրացիք երբ հասեր են՝ անշնչացեալ դտեր են զինքը։ Մայրն ու քոյրը ամիս մը յառաջ Գասթամունի դացած ըլլալով՝ ինքն առանձին մնացած էր. գրեր է իր ծնողաց, թէ «Մխալիման, որդի Մխալիմանի եմ. լաւ է մեռանիլ քան թէ այսպէս ապրիլ. հետեւապէս կը ներուի յանցանաց. ո՛հ, թո՛ղ Նայիլէնս քովը թաղեն զիս.» ուրիշ խօսքեր ալ կան, բայց գիւրընթեռնուլի չեն եղեր։ Դեռ 23 տարեկան էր։

— Մօտերս Փըրդ – Բիլիսէի մէջ 30-35 տրամ ծանրութեամբ կարկուտ գալով՝ բաղում ջնաս հասուցեր է երկրագործութեան, և մարդ մը արտին մէջ աչխատած ատենը գլխուն եկած կարկուտին պատճառաւ մեռեր է։

— Սերբատիոյ կուսակալութեան վիճակի ոչխարաց տուրքէն՝ 3 միլիոն 580 հազար ղրչ, մինչև անցեալ յունիս 10, Պոլիս ղրկուեր է։ Ա.յս նահանգին յիշեալ տուրքը՝ կառավարական պաշտօնատանց ամսականաց յատկացեալ է։

— Կառավարութիւնն իմանալով, որ պաշտօնակալաց ոմանք՝ խորհրդակցութեան ենթարկեալ կառավարութեան գաղտնիքն դուրս հանելու ջնասակար ընթացից մէջ կգտնուին, պաշտօնատուններն հրաման ղրկեր է, որ բոլոր պաշտօնակալաց ծանուցանեն թէ անխտիր պաշտօնանկ պիտի լինին՝ այսպիսի ընթացից մէջ գտնուողներն։ Միանգամայն, բարձրագոյն հրամանաւ խիստ կանոնագրութիւն մը կխմբագրուի յատկապէս այս մասին համար։

— Էյդուպի կողմերը բաղում մարախ գալով՝ երկրագործական բերքն ջնջելէն զատ, գետերէն ու պատուհաններէն տուներն ալ մտնելով, վարագոյր՝ բազմոցի ծածկոյթ, և այլն, ուտելով ծակ ծակ ըրեր են. և զարմանալի է՝ որ Բամիղ — Գըշլասիի կողմերն հովուի մը ոչն ալ այս վիճակին հասուցեր են, զոր ի գարձին տեսնելով հովիւն՝ ոչխարներն առեր փախեր է։

— Հինգշաբթի երեկոյ իզմիտի շուկային մէջ հրդեհ պատահեր և 60 խանութ այրեր են։

— Թունուզի և Գաղղիոյ կառավարութեանց մէջ՝ ի Թունուս օտարաց կալուածատիրութեան և այլոց վերաբերեալ գաղտնի պայմանագիր մ՝ալ հաստատուած է եղեր։ Անգղիոյ խորհրդարանին մէջ ծանօթութիւն ուզուեր է այս մասին, սակայն նախարարութեան կողմանէ գարձեալ տարտամ պատասխաններ տրուեր են։

— Պուլղարիոյ իշխանն, իր առաջարկութեանց ընդունուելուն առթիւ, երկրորդ յայտարարութեամբ մը չնորհակալութիւն յայտներ է Ժողովրդեան՝ առ ինքն հաւակրութիւն և վստահութիւն ունենալուն համար։ Առաջարկութեանց ընդունուելուն լուրն Սօֆիա հասնելուն պէս հանդէս կատարուեր է. քաղաքը զարդարուեր և գիշերը լուսաւառութիւն եղեր է։

— Ամերիկայի նախագահն զարնող կիթոյի դրպանէն հետեւեալ յամառով դիր մ՝ելեր է։—

« Նախագահին աղետալի մահը տխուր հարկ մ՝եր. հանրապետական մասը պիտի միացունէ և հանրապետութիւնը փրկէ. կեանքը սուտ երազ մ՝է, և քիչ հոգ մ՝է երբ մեկը մեռնի. մարդկային կեանքը վտքը արժէք ունի. պատերազմի ժամանակ հազարաւոր կարճ տղայք գետնին տակը կանցնին առանց կաթիլ մ՝արտասուաց. ես կարծեմ թէ նախագահը քրիստոնեայ մ՝եր, և թէ աւելի երջանիկ պիտի ըլլայ դրախտին մէջ քան թէ աստիպրեղի օրիորդ կարֆիլտի համար աւելի դժուարին պիտի ըլլայ այսպէս մեռնիլ իր ամուսնոյն հետ քան բնական մահուամբ. նախագահն օր մը անպատճառ պիտի երթար ո՛ր և է կերպիւ. ես նախագահին դէմ չարակամութիւն մը չունիմ. իր մահը քաղաքական հարկ մ՝եր. ես օրէնսդէտ, աստուածաբան և քաղաքագէտ եմ . . . ի բանտ կերթամ։»

ԻԼԱՆ

ԷՎԳԱՖ ՆԷՋԱՐԼԻԹԻ

Էվգաֆը հիւանդացաւ խաղինէ. սինտէն մազապուր ճէննէթմէքեան պէղմը ալեմ վայիտէ սուլթան հազրէթլէրի վազըֆընտան պէշկճաչտա վաղօր խաքէլէսինտէ քեային օն իւչ նոմէրօ իլէ մուրազամ պիր պապ տիւքեան քիրայէ վիրկնէճէ.ը իւզրէ օլաը պընտան՝ թալիպ օլանլէրին իլան նը թարիխինտէն նիհայէթ պիր հաֆթայա գատար էվգաֆը հիւմայուն վարիտաթը ումուվիյէ իտարէսինէ կելմէլէրի իլան օլունուր ...

7 Թէմմուզ 1881

ԻԼԱՆ

ԷՎԳԱՖ ՆԷՋԱՐԼԻԹԻ

Հուլուլը թէգարրիւպիտէն չէհրը բամաղանտա ճէննէթմէքեան էպու էլ ֆաթիհ Սուլթան Մէհմէտ խան զազի վէ սուլթան Պայազիտ վէլի հազրաթը իլէ Ս.յա-Սօֆիայի քէպիը ճամիի չէրիֆի հավլուլէրինտէ քիւշատ օլունաճագ սէրկիլէտէն, վէ պիրտէ լյսի ֆիթիրտէ միւշարիլէյհ Մէհմէտ խան հազրէթլէրինին ճամիի թըշ հավլուսընտա իւչ կիւնտէ աչըլաճագ սէրկիլէրտէն գատիմտէ օլակէլտիյի վէչհի իլէ բուսումաթլէրինի ալմագ, վէ թահարէթլէրի միւլթէզիմինէ բաճի պուլընմագ, վէ պէտէլի լիրա եիւզ զուրուշա օլարագ բէչինէն թէսլիմ օլունմագ իւզրէ, միւզայէտէլէրի խապինէճէ իճրա գըլընմագտա օլորղընտան՝ թալիպ օլանլէրին նիհայէթ չապանըն եիկիրմի եէտինճի կիւնիւնէ դատար էվգաֆը հիւմայուն վարիտաթը ումուվիյէ իտարէսինէ կելմէլէրի իլան օլունուր ...

14 Շապան 98

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՑ

և ՉԻՊՊՈԼԻՏԵԱՑ ՊԻՆԴԵՄՈՆՏԻ

կրկին տպագ. Գերեզմանականք

Տաղաչափեալ յանգաւոր

ի Յարութենէ Գ. Մըմճեան

Տպագրութիւն Արամեան

Գին 5 ղուրուշ

Կ. ՀԱԶԱՐԵԱՆ

ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ

Ծխախոտի հանրածանօթ վաճառականներէն Հազարեան կ. բապետ էֆէնտի՝ որ երկար ժամանակէ հետէ Եւրոպիոյ հետ ծխախոտի վաճառականութեան յարաբերութիւն ունենալով՝ մեծ հմտութիւն ու փորձառութիւն ստացած է, իւր տրամադրութեան ներքեւ առած է այս անգամ երբեմն «Գանտիլլի» անուանեալ գործարանը։ Արդէն յայտնի է, թէ Հազարեան էֆէնտի յատուկ գործակալները ունի Եէնիճէ, Տրամա, Քավալա, Սամսուն, Պաֆրա և Տրապիզոն. հետեւաբար ընտրութեան ու ժանուութեան համար մեծ դիւրութիւններ կընծայէ. ուստի յիշեալ գործարանը դիմողմարդ ամեն կարգի յաճախորդաց անտարակոյս գոհ պիտի լինին։ Յատուկ յանձնարարութիւնք ալ ճշդիւ կկատարուին ամեն ճաշակի յաճախորդաց համար։ Եւ բոպա զրկուելիք ծխախոտք ազատ են պանտըրոլի տուրքէ։

Գործարանն է Պօլիս Մ՝ըսըր – չարշըի անկիւնը Բէթէնճիլէր – պաշը, եավրաքճի խան թիւ 106։



PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏԱՔ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը. ան ամեն չղային տկարութեան ուժանիւթ փութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արիւն և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ՝ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կուժուռութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լցուած կազեր. գլխի ցաւեր կը վանէ, մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ ոմ չատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ որ. ժեղ և բնական դիրքը կը զգենու։

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մարթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (էրէսիփէլ), արունից և ստեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կը լաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ օդացաւ (էբէլ) ըսուած հիւանդութեան. Իւր կազդուրիչ, և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (ըըռաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան ո՛ր ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան ձանակը նշանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւանդ պէս պահճէ գաբու Թաշ խանի կողմերը պ. Գասպարեանի դեղարանը Ն. 7 կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տօքթօր Հոլլօուէյ & Լօնտօն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

6 Յուլիս 1881

Ֆոնսօլիտէ		16 — 56
Երկաթուղեայց	Ֆրնգ.	51 — 25
Թրամուէյ	Օ. Լ.	4 — 5
1863ի փոխառութիւն	Ֆրնգ.	88 —
1865ի »	»	88 — 50
1869ի »	»	87 — 50
1872ի »	»	27 —

Օսմանեան լիրան 100 ղրչն

Մէհտիյէ	107 — 15
Մէճիտիէ	205 —
Հինգնոց	211 —
Վեցնոց	127 —
Պղինձ	605 —
Թղթադրամ	1060 —
Ռուսիոյ Բօզ	90 — 18
Գաղղիական լիրա	87 — 20
Անգղիական »	110 7
Գրիմլից	51 25

ՏՆՕՐԷՆ ԵԻ ՏԷՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՋԱՐԻԱՐԵԱՆ

Կ. Պօլիս Սուլթան Համամ